Երկիր Ծիրանի

Գյումրու քաղաքապետ

Սամվել Բալասանյանին

«Երկիր Ծիրանի» կուսակցության ժողովի անդամ

Արամ Ենոքյանից

Հեռ՝ +378.87.10.16

+374.93.80.66.90

+374.55.40.39.00

Էլ. փոստ՝ yerkirtsiranipartyinfo@gmail.com

yerkirtsiraniparty@gmail.com

22.02.2018թ.

# ԴԻՄՈՒՄ
# ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՎԱՔԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ
# ԻՐԱԶԵԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով՝ իրազեկում ենք լիազոր մարմնին, որ 2018 թվականի մարտի 4-ից մինչև մարտի 20-ը Գյումրի քաղաքի Վարդան Աճեմյանի անվան դրամատիկական թատրոնի հարակից տարածքում «Երկիր Ծիրանի» կուսակցությունը նախատեսում է անցկացնել հանրահավաք և երթ, որը նշված օրերին սկսվելու է ժամը 17:00–ին և ավարտվելու է մինչև 22:00-ն:

Հավաքի նպատակն է բողոք ընդդեմ բռնակալության և շուրջ 25-ամյա վաղեմության բռնությունների:

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ»
Փաստաթղթաշրջանառության բաժին
Ստացման է 27.02 2018թ.
Գրանցման է N 2162

Կարգադրիչների մոտավոր թիվը 5-ն է, իսկ հավաքի մասնակիցների թիվը՝ շուրջ 1000: Երթի երթուղին է՝ Սայաթ Նովա փողոց-Անկախության փողոց-Շիրազի փողոց-Հաղթանակ պողոտա-Սպանդարյան փողոց-Վարդանանց հրապարակ-Շահումյան փողոց-Ռուսթավելի փողոց-Սայաթ Նովա փողոց:

Երթը սկսվելու է 19:00-ին և ավարտվելու է 22:00-ին:

Հավաքի և երթի անցկացման ժամանակ օգտագործվելիք առարկաները կամ տեխնիկական միջոցներն են՝ պաստառներ, բարձրախոսներ, դրոշակներ, թռուցիկներ:

Ղեկավարվելով «Հավաքների ազատության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով՝ խնդրում եմ պետության կողմից ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ հավաքի և երթի բնականոն ու խաղաղ ընթացքն ապահովելու նպատակով:

Կից ներկայացվում է՝

- Հավաքի կազմակերպչի անձնագրի պատճենը (Արամ Ենոքյան)
- Հավաքի ղեկավարի անձնագրի պատճենը (Զարուհի Փոստանջյան)

Դիմող՝ Արամ Ենոքյան

«Երկիր Ծիրանի» կուսակցության ժողովի անդամ